



# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

12.06.2017թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-17/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2016թ. թիվ 1/73-1/20019-16 և 27.02.2017թ. թիվ 03/73-3/3137-17 գրություններով ներկայացված «Սեյսմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04227903) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-17/17 բողոք), ՀՀ Արարատի մարզպետարանի 04.08.2016թ. թիվ 2/3/1-2/4227-16, 09.08.2016թ. թիվ 2/3/1-2/4369-16 և Երևանի քաղաքապետարանի 13.02.2017թ. թիվ 01/61-2561 գրությունները, պարզեց հետևյալը.

#### 1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 09.08.2016թ. թիվ 1/73-1/20019-16 և 27.02.2017թ. թիվ 03/73-3/3137-17 գրություններով, դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սեյսմշին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և

այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ Արարատի մարզպետարանի 04.08.2016թ. թիվ 2/3/1-2/4227-16, 09.08.2016թ. թիվ 2/3/1-2/4369-16 և Երևանի քաղաքապետարանի 13.02.2017թ. թիվ 01/01-2561 գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճեններով:

## **2. «Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Կենտրոնը կարծիք ստանալու նպատակով 16.08.2016թ. թիվ 01/04.1/3094-16 և 01.03.2017թ. գրություններով դիմել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 01.03.2017թ. գրության՝ Ընկերությունը 23.03.2017թ. թիվ 03-17/53 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում 03.02.2017թ. ծանուցում է ուղարկվել Ընկերությանը, ի պատասխան որի՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն իր էլ. փոստից 03.02.2017թ. Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էլ. փոստի հասցեին ուղարկել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր, սակայն նամակը տեխնիկական պատճառներով Երևանի քաղաքապետարանը չի ստացել:

Ի պատասխան Կենտրոնի 16.08.2016թ. թիվ 01/04.1/3094-16 գրության՝ Ընկերությունը 23.03.2017թ. թիվ 03-17/54 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից կազմակերպված «ՀՀԱՄ-ՊԸԾՁԲ-16/02» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (28.07.2016թ.) Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, հարկային պարտավորությունները ծագել են 26.12.2016թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2015թ. հաշվետու տարվա 4-րդ հաշվետու եռամսյակի ճշգրտված հաշվետվությունից:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել վերը նշված հանգամանքները և չներառել «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

### **3. ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը**

ՀՀ Արարատի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 04.08.2016թ. թիվ 2/3/1-2/4227-16 և 09.08.2016թ. թիվ 2/3/1-2/4369-16 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ՀՀԱՄ-ՊԸԾՁԲ-16/02» ծածկագրով պարզեցված ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Մինչույն ժամանակ, ՀՀ Արարատի մարզպետարանը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, ըստ որի՝ առաջատար գործընկեր «Սեյսմշին» ՍՊԸ-ն և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (28.07.2016թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

### **4. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 13.02.2017թ. թիվ 01/61-2561 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԵԲ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Մինչույն ժամանակ, Երևանի քաղաքապետարանը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով առկա անհամապատասխանությունը շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և էլեկտրոնային եղանակով ծանուցվել է մասնակցին, սակայն «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում առկա անհամապատասխանությունը չի շտկվել:

### **5. ՍՑ-ԳԲԽ-17/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2016թ. թիվ 1/73-1/20019-16 և 27.02.2017թ. թիվ 03/73-3/3137-17 գրություններով ներկայացված «Սեյսմիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարարի մարզպետարանի կողմից կազմակերպված «ՀՀԱՄ-ՊԸԾՁԲ-16/02» ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) վերաբերյալ.

- Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով առաջատար գործընկեր «Սեյսմիկ» ՍՊԸ-ն և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ն (կոնսորցիումով) **28.07.2016թ.** հայտ է ներկայացրել:

- «Սեյսմիկ» ՍՊԸ-ն հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

- ՀՀ Արարարի մարզպետարանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 29.07.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն առաջատար գործընկեր «Սեյսմիկ» ՍՊԸ-ի և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի վերաբերյալ՝ նշելով միայն «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679, այնինչ «Սեյսմիկ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն է՝ 04227903:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատու 1-ին 02.08.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սեյսմիկ» ՍՊԸ-ն 2016թ. հուլիսի 28-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 77.155 ՀՀ դրամի չափով, սակայն եզրակացության մեջ՝ հարկ վճարողի հաշվառման համար սյունակում, «Սեյսմիկ» ՍՊԸ-ի դիմաց նշված է «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679, մինչդեռ «Սեյսմիկ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն է՝ 04227903:

• Կենտրոնը, ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ Արարատի մարզպետարանը վերը նշված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն առաջատար գործընկեր «Սեյսմշին» ՍՊԸ-ի և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի վերաբերյալ, սակայն հարցման համար նշել է միայն «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679, այնինչ «Սեյսմշին» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն է՝ 04227903, ուստի. 31.01.2017թ. թիվ 01/04.1/281-17 գրությամբ դիմելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին խնդրել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցն ուսումնասիրելու նպատակով Կենտրոնին հայտնել Ընկերության կողմից 28.07.2016թ. (հայտը ներկայացնելու օրվա) դրությամբ **Ժամկետանց** հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.02.2017թ. թիվ 1/6-1/5234-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում «Սեյսմշին» ՍՊԸ-ն 28.07.2016թ. դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 38.197 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը սակայն առաջացել է **26.12.2016թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի շրջանառության հարկի ճշգրտված հաշվարկի արդյունքում:**

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ՝ նաև՝ Ընթացակարգ 2) վերաբերյալ.

• Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով «Սեյսմշին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 02.02.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.3 կետով «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն և որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը (03.02.2017թ.)՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

• Ըստ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկված էլեկտրոնային ծանուցման արտատպման, վերջինս 03.02.2017թ. ժամը 12:47 առաջարկել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 07.02.2017թ. ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետի համաձայն «Սեյսմշին» ՍՊԸ-ի

կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը, արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

## **6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **ավելի քան մեկ անգամ խախտել է** պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ **գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում **գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ փվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և իրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում **հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:**

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ **չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:**

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սեյսմշին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 02.02.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.3 կետով «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն և որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը (03.02.2017թ.)՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Ըստ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկված էլեկտրոնային ծանուցման արտատպման՝ գնահատող հանձնաժողովը 03.02.2017թ. ժամը 12:47 առաջարկել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 07.02.2017թ. ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է: .

Այսպիսով, Ընկերությունը 04.02.2017թ. մեկ օրվա ընթացքում անհամապատասխանությունը չշտկելով՝ թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ստանձնած պարտավորության ընդամենը մեկ խախտում, ինչը բավարար չէ ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2017թ. թիվ 03/73-3/3137-17 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից կազմակերպված «ՀՀԱՄ-ՊԸԾՁԲ-16/02» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սեյսմշին» ՍՊԸ-ն **28.07.2016թ.** ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

ՀՀ Արարատի մարզպետարանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 29.07.2016թ. կատարած հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն առաջատար գործընկեր «Սեյսմշին» ՍՊԸ-ի և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի վերաբերյալ և վերոհիշյալ հարցման մեջ նշել է միայն «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679, այնինչ «Սեյսմշին» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն է՝ 04227903:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ Արարատի մարզպետարանին 02.08.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սեյսմշին» ՍՊԸ-ն 2016թ. հուլիսի 28-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 77.155 ՀՀ դրամի չափով, սակայն եզրակացության մեջ՝ հարկ վճարողի հաշվառման համար սյունակում, «Սեյսմշին» ՍՊԸ-ի դիմաց նշված է «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ Արարատի մարզպետարանը վերը նշված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն առաջատար գործընկեր «Սեյսմշին» ՍՊԸ-ի և գործընկեր 1 «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի վերաբերյալ և վերոհիշյալ հարցման համար նշել է միայն «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, այն է՝ 00930679 («Սեյսմշին» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն է՝ 04227903), ուստի Կենտրոնը 31.01.2017թ. թիվ 01/04.1/281-17 գրությամբ դիմելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցն ուսումնասիրելու նպատակով հայտնել տեղեկատվություն Ընկերության կողմից 28.07.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) **ժամկետանց հարկային պարտավորություններ** ունենալու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.02.2017թ. թիվ 1/6-1/5234-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում «Սեյսմշին» ՍՊԸ-ն 28.07.2016թ. դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 38.197 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը սակայն առաջացել է

**26.12.2016թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի շրջանառության հարկի ճշգրտված հաշվարկի արդյունքում:**

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.02.2017թ. թիվ 1/6-1/5234-17 գրությունից պարզ է դառնում, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ն 28.07.2016թ-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և 38 197 ՀՀ դրամի հարկային պարտավորությունն առաջացել է միայն Ընկերության կողմից 26.12.2016թ.-ին (այսինքն հայտը ներկայացնելու օրվանից հետո) ճշգրտված հաշվարկի ներկայացման արդյունքում:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում հայտը ներկայացնելու օրը՝ 28.07.2016թ. ներկայացրած հավելված 2-ով Ընկերությունը չի ներկայացրել կեղծ տվյալ, ուստի և «Սեյսմշին» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2016թ. թիվ 1/73-1/20019-16 և 27.02.2017թ. թիվ 03/73-3/3137-17 գրություններով ներկայացված «Սեյսմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04227903) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**Նախագահ՝**



**Գևորգ Հայրապետյան**

**Անդամ՝**



**Հարություն Մարտիրոսյան**